

~~2 lipon leepnef~~

2cegf ceepnef

1897p

Lucy

634

2009



Handwritten notes in the top left corner.

Handwritten number 188.

Handwritten purple markings.

Առևժ Աշխատանքի և Գրադարանների
Բաժնի Բաշխման Կենտրոն. 1990 թ

Լույս
Հրատարակութիւն ԳՐԱՍԵՐԻ

634

824

ՀԱԶԻ ԱԲՐԵՔ

ԼԵՐՄՈՆՏՈՒԻ

(1000 / 40263)

Թարգմ. ՍԻՄ. ՀՈՎՈՒՆԱՆ



906

Բ Ա Գ Ո Ւ
ՏՊԱՐԱՆ Ա. Մ. ՂԱԶԱՐՅԱՆԻ
1897

ՀԱԶԻ ԱԲՐԷՔ

—...—

Մեծ է և հարուստ աուլը Ջեմատ,
 Դեռ հարկ չէ տուել նա ոչ մի մարդու,
 Նրա պենդ պարիսպն է ձեռքի պողպատ,
 Մզկիթը՝ կուռի դաշտը ահարկու:
 Եւ անկախ, ազատ որդիքը նրա
 Եփուած են կուռում անվեհեր, անաս:
 Թնդում է նրանց գործերի հոշակ
 Կովկասում, օտար ազգերում հեռու,
 Եւ ուրսի սրտին նշանած գնդակն
 Անցել չէ անվրէպ, առանց դիպչելու:

Կրակ է թափում կիզող երկնքից.
 Գողորշին ցնդում այրուող ժայռերից.
 Արծիւը, անշարժ թևերը փռած,
 Սևին է տալիս երկնում հաղիւ հաղ.
 Քնած են ձորեր խորը մրափով,
 Միայն աուլում աղմուկ և վրդով:
 Ողջ յուզուած անուն է դատարկանում,
 Եւ սարի տակին, ուր հողմն է փչում,

Дозволено Цензурою
 Тифлисъ 27-го Мая 1896 года.



ՄԾ 633

634-2009

Ուր որ քարափեց հոսում է վտակ,
 Նայում է կանգնած մի լռիկ խմբակ:
 Ի՞նչ բանի մասին է զրոյց անում
 Ջեմատ առւել այդ խումբն անվեհեր,
 Ուզո՞ւմ են արդեօք շրջել սարերում,
 Փակցնել օտարի ձիերի ջոկեր:
 Չե՞ն սպասում արդեօք ռուսաց զօրքերին,
 Որ խմեն արիւն քաղցր հիւրերի. —
 Ո՛չ, միայն կսկիծ և զայրոյթ խորին
 Փայլում են դէմքին լեւընցիների:
 Օտարականի զգեստներ հապած,
 Մի քարի վրայ տխուր խոնարհած,
 Նստել է հիւժուած մի ծերուկ լէզգի.
 Թափում է բերնից խօսքը ջրի նման.
 Աչքը մերթ ընդ մերթ դէպի շրջական
 Ուզողում է տխուր, տեսքով ցաւալի.
 Ականջ են դնում ծեր լեւնականի
 Տրտում պատմութեան այսպէս սկսուած.
 «Երեք դստրիկներ և երեք որդի
 Ծերութեանս մօտ պարգեւեց Աստուած,
 Բայց վէս մրրիկներն ահեղ բարձրացան
 Եւ ծառի ձիւղերն ողջը թափուեցան:
 Եւ կանգնած եմ ես այժմ միմիայն
 Այս հովտի միջին մերկ կոճղի նման:

Աւա՛ղ, ծեր եմ ես: Ալիքն իմ գլխի
 Սիպտակ է, քան թէ ձիւնն այն գաղաթի.
 Սակայն և երբեմն սառը ձիւնի տակ
 Վազում է կայտառ խոխոջուն վտակ:
 Յառա՛ջ, Ջեմատի ասպետներ արի,
 Տոյց տուեցէք ձեր քաջութիւնը պարզ,
 Ո՞վ է ճանաչում Փոլաբ իշխանին,
 Ո՞վ յետ կըդարձնէ ինձ իմ աղջկաս:
 Երկու միւս քոյրերն օտարութեան մէջ
 Վաղ թառամեցան մատաղ ծաղկի պէս.
 Իսկ անհաւասար կուում եղբայրներ,
 Կուուելով արի, ընկան անվեհեր.
 Երկուսը օտար երկրում, իսկ վերջին
 Սըւինով խոցուեց հէնց իմ առաջին:
 Նա ժպտում էր դեռ հոգին փշեւիս.
 Տեսնում էր, ինչպէս կոյսը դրախտից
 Մահուանից առաջ իւր մօտ էր թռչում,
 Ըարժելով փունջն իւր ծիածանագոյն:
 Եւ ահա գնացի դէպի անապատ
 Ապրելու միտեղ վերջին աղջկաս հետ.
 Նրան պահեցի երբև սուրբ աւանդ,
 Նա էր ողջ իմ կայք, յոյսը փրկաւէս:
 Ես առայ ինձ հետ միմիայն նըրան,
 Եւ իմ անբաժան, աննենդ հրացան:

Այրում նրա հետ ապաստանեցայ,
 Հայրենի քաղցրիկ օջաղից զրկուած,
 Ես թշուառութեան շուտ ընտելացայ,
 Իսկ աղատութեան վաղ էի սովորած:
 Իայց անխուսափելի ժամը վրայ հասաւ,
 Եւ իմ նազելի թռչնակը թռաւ:
 Մի անգամ գիշերը խուլ էր սաստիկ.
 Քրնածէի ես . . . Ինձանից վերև
 Նստած էր մատաղ հրեշտակըս լռիկ,
 Չարժեքով ձեռքին մի կանաչ տերև:
 Զարթնում եմ յանկարծ, փսփսոց եմ լսում,
 Եւ մեղմ աղաղակ, և ձիւռ դոփիւն . . .
 Վազում եմ, տեսնում՝ սարի ներքեւով
 Արշաւում է մի ձիւռոր ճեպով,
 Միակ աղջըկաս գրկի մէջ սեղմած:
 Անէծք զրկեցի նրա հետ՝ կատղած:
 Ո՛հ ինչո՞ւ, ինչո՞ւ նրբանց չըհասար
 Երկրորդ սուրհանդակ, իմ կարմիր կապար:
 Ահեղ վրէժով՝ սրտումս թագցրած,
 Անզօր վրէժ առնուլ իմ անարգանքիս,
 Ըրջում եմ սարում ես հէնց այն ժամից,
 Ինչպէս որ մի օձ սմբակով ձխլած:
 Եւ ոչ մի ըրպէ չունիմ ես հանգիստ
 Իեռ մինչև հիմա այն տանջող օրից:

Յառա՛ջ, Զեմատի ասպետներ արի,
 Յոյց տուեցէք ձեր քաջութիւնը պարզ,
 Ո՞վ է ճանաչում, Փոլադ իշխանին,
 Ո՞վ յետ կըդարձնի ինձ իմ աղջըկաս»):

«Ես» խօսեց մի սէգ, սեւաչեայ հսկայ,
 Ամուր բռնելով դաշոյն պողպատեայ.
 Ու մեծ զարմացմամբ, լուռ և անբարբառ
 Ամբօսն յառաջեց, խոնուելով իրար:

«Ճանաչում եմ ես Փոլադ իշխանին,
 Վճռել եմ, երկու գիշեր կաց այստեղ,
 Երբէք չի նստել անվեհեր չաջին
 Սանձակո՞ծ ձիուն ունայն, 'ի զուր տեղ.
 Իայց երբ որոշած ըրպէին չեմ գալ,
 Իու այն ժամանակ ուխտըս մոռացիր,
 Եւ մարգարէին իմ հոգուս համար՝
 Ճամբայ ընկնելով, ինդրիր, աղօթիր»):

Ծագեց արշալոյս: Յետքիցն ամպերի,
 Երկնային կապոյտ կամարի վըրան
 Գագաթներ ժէռ քար վեհ հսկաների
 Սառցով պսակուած՝ քնից արթնացան,
 Ամպը ձորի մէջ նոյնպէս արթնացաւ,

Իբրև վարդագոյն առագաստ ուռաւ,
 Եւ կամաց կամաց բարձրացաւ երկին,
 Քաղցր առաւօտ. վճի յետևով
 Գնում է կամաց լերան փեշերքով
 Ձէրքէզը, նստած ամէհի նժոյգին:
 Գեռ ծոյլ ու դանդաղ լուսատուն երկնի
 Ձէ չորացըրել ցօղերը բլրի:
 Բարձր ժայռերից, ճամբի կողքերով,
 Կախուած են վայրի խաղողի վազներ,
 Նրանց արծաթէ, վճիտ անձրևով
 Յաճախ թըջուեցան ձին ու իրան տէր:
 Անփոյթ թողնելով սանձն երիվարի՝
 Իւր սիրուն մտրակ շարժում է ձեռին,
 Եւ երբեմն երբեմն երգն իւր պապերի
 Երգում է մեղմիկ, յենուելով բաշին.
 Եւ սարի յետև հեռու արձագանգ
 Կրկնում է տխուր նոյնը հանգունակ:

Մի պտոյտ ահա՛ ու բաց ճանապարհ,
 Քանդուած՝ ճոճուող սայլի ակներով,
 Այնտեղ, ուր գրկում գեղեցկայարմար
 Փէռ քար հսկաներ բեկբեկ պսակով:
 Եւ նա այնտեղից, ինչպէս աչքի տակ,
 Նշմարեց իսկոյն խաղաղիկ աուլ,

Եւ թող, բարձրացած հօտից բազմերանգ,
 Եւ արթնանալու ալմուկները խուլ,
 Եւ հէնց լանջերում ծուռ զառիվայրի
 Նկատեց խրճիթ Փոլաղ իշխանի:
 Եւ արծուի նման սարերի գլխից
 Ձգեց նա կտրին հայեացք խնդալից:
 Զով շուաքի մէջ, տան շեմքի մօտին,
 Մատաղ լէզգուհին ահա նստած լուռ,
 Փռուած է ճամբան նրա առաջին,
 Բայց նա դէպ հեռուն նայում է տխուր:
 Ո՛ւմ ես ըսպասում, աստղ արեւելքի,
 Քնքոյշ, նազելի հոգսով այդ տեսակ,
 Մտերմի՞դ արդեօք աշխարհից հեռի,
 Եղբօ՞րդ արդեօք կուուից դժնդակ:
 Խոնջացած օրուայ տօթից դառնաշունչ՝
 Պատրաստ է իսկոյն գլուխըդ քնքոյշ
 Յաղթ կրճքի վրայ խոնարհուել մեղմիկ:
 Գէպի քո ծնկներ ձեռքդ ահա՛ սահեց,
 Եւ մի զօրութիւն հեշտասէր, քաղցրիկ,
 Գերի վիճակից մարմինդ ցնցեց:
 Պղտորուեց ահա՛ դէմքդ լուսաւոր,
 Ծածկուելով ցօղով մարգարտանման,
 Քո այտերի մէջ, ինչպէս մէտէօր,
 Խաղում է վառ բոցն հարաւի արեան:

Քո կախարդական, դիւթիչ շրթունքներ
 Կանչում են սիրոյ ողջագուրանքներ:
 Բորբոքուած ես դու համր ըզէրով,
 Մի բան ես ուզում գրկել ու գգուել,
 Եւ շարմաղ ծծերդ թոյլ թրթեւներով
 Քո կրծքի ծածկոց կամին յետ մղել:
 Ո՛հ ս՛ր ես սրտի անդին ընկեր դու...
 Բայց ահա ձիու տրոփիւն հեռու,
 Եւ ծանօթ փոշին բարձրացաւ յանկարծ.
 «Իշխանն է անշուշտ», կոյսը շշնջաց:

Յոյսը մարդկերանց հեշտ է ըսփոփում,
 Աչքըն էլ խաբում դարձեալ հեշտութեամբ,
 Ուղեորն արդէն շատ է մօտենում...
 Աւճղ, լէզգուհին նրան չի ճանաչում,
 Եւ տեսնում է լոկ առաջին անգամ. —
 Օտար մարդ է նա, դաշտում ուշացած,
 Խնդրում օթեւան, հանգիստ, հիւրասէր,
 Ծուխ է բարձրանում իւր ձիուց յողնած,
 Եւ պատրաստ է նա ձիուց վայր թռչել...
 Թուիր ձեաւոր... բայց ինչ պատահեց.
 Կարծես վախեցաւ բընակարանից.
 Նայում է հառաչք վշտագին ու հեղ
 Դուրս թռաւ սեղմուած իւր շրթունքներից

ձիւղից պոկ եկած սաղարթի նման,
 Որին որ փշրե՛լ է շանթն ամառուան:
 «Ինչո՞ւ ես կանգնել, շեմքում, ուղեւոր,
 Իջիր քո ձիուց պատերազմական,
 Աստուծոյ նուէ՛ր է պատահած հիւր,
 Մեղր և կումիս ունիմ բաւական:
 Թէև դու աղբատ՝ բայց հարուստ եմ ես,
 Փոլաղ բէգի յարկ խնդրում եմ պատուես,
 Եւ երբոր կ'ընկնես ճանապարհ դարձեալ՝
 Աղօթքներիդ մէջ մեզ մի մոռանալ:

Հ ա ջ Ե Ա բ ր է ք:

Ալլահն աղատէ, քեզ, ո՛վ Լէիլա,
 Հիւրեդ փաղաքշանք տուեցիր ընծայ,
 Եւ դըրա համար հօրիցդ ողջոյն
 Բերեց նա իւր հետ տարածամ պահուն:

Լ է Ե Ր ա:

Ա՛խ, ի՞նչպէս, իմ հայրն անջատման ժամից
 Ինձ մինչև հիմա՞ դեռ չէ մոռացել:
 Ո՞րտեղ է ապրում:

Հ ա ջ Ե Ա բ ր է ք:

Այնտեղ է դարձեալ,

Մերթ անապատում, մերթ տանն օտարի:

Լ է Ի Լ ա:

Արգէօք բախտաւոր, ուրախ է, ասա,
Ձուտ պատասխանիր:

Հ ա ջ Ի Ա բ ր է ք:

Կենդանի է նա,

Թէև բացէ մերթ գըլուխն ալեգարդ

Անձրեւին, ցրտին կարկամեցուցիչ.

Ի՞սկ դու:

Լ է Ի Լ ա:

Բախտաւոր:

Հ ա ջ Ի Ա բ ր է ք: (ցածր)

Այդ աւելի վատ:

Լ է Ի Լ ա:

Հը՛, Ի՞նչպէս, Ի՞նչպէս, Ի՞նչ ասիր,

Հ ա ջ Ի Ա բ ր է ք:

Ոչինչ:

Սեղան է նստած եկուորը ահա,
Զուարթարար գինին ու ճաթն արծաթեայ
Առաջն են դրած դեռ ձեռք չըտըած:
Տարօրինակ մարդ է ուղիղն ասած:
Ինչպէ՛ս են ցնցում կնճիռները խոր
Նըրա դժնադէմ մույլ ճակատին,
Երկար տարինե՞ր, վշտե՞ր բերաւոր
Նըրա ճակատին արդեօք քաշեցին:
Ուղելով հերին զըւարձացընել՝
Լէիլան առաւ իրան դահիրան,
Թեթև զարներով իւր փափուկ մատներ՝
Երգում է ուրախ, պարում լէզգինկան:
Փայլում են աչքերն աստղի պէս պայծառ,
Եւ առողջիկ կուրծք դողդողում կայտառ:
Մանկական ուրախ, զուարթ ցնծութեամբ
Իւր անմեղ հոգին լիքն է և զեղուն,
Եկուորի մօտ նա անում է շրջան,
Ինչպէս օր թիթեռ վերջն շողերում:
Եւ յանկարծ թնդող իրան դահիրան
Բարձրացնում է նա ձեռներով սիպտակ,
Պտտում է գլխի վերևը նըրան,
Եւ կամա՛ց, կամա՛ց աչքեր սևօրակ
Ման է ածում նա, և լուռ շրթունքներ
Ուզում են ասել ժպտով սիրալի.

«Խնդա, զուարճացիր իմ հիւր տխրալի,
 Բախտը և վշտեր ողջն են ցընորքներ»:

Հ ա ջ Ի Ա բ բ է ք:

Բաւ է, Լ է ելա, դադարեցըրու,
 Քո ուրախութիւն մոռացիր առժամ.
 Ասա՛, մի՞թէ քեզ որևէ անգամ
 Ձէ շփոթեցրել մտածմունք մահու.
 Զուտ պատասխանիր իմ այս հարցումին:

Լ է ե լ ա:

Ո՛չ, ի՞նչիս է պէտք սառը գերեզման.
 Գըրախտըս գտայ երկրիս երեսին:

Հ ա ջ Ի Ա բ բ է ք:

Սպասիր սակայն, մի հարց էլ կըտամ.
 Գու չե՞ս կարօտել քո ծննդավայր,
 Զողջողուն երկինք Քաղստան երկրի:

Լ է ե լ ա:

Ի՞նչու, լեռնային մշուշը մնայլ
 Լաւ է առաւել և ուրախալի:
 Ամեն տեղ սիրուն-Աստուծոյ աշխարհ,
 Ձկայ հայրենիք մեր սրտի համար.

Սա բռնութիւնից երբէք չի վախում.
 Թեւաւորի պէս թռչում է, սլանում...
 Հաւատա՛ ինձ դու, այնտե՛ղ կայ լոկ բախտ,
 Ուր սիրումեն մեզ, ընծայում հաւատ:

Հ ա ջ Ի Ա բ բ է ք:

Սէ՛ր... բայց գիտե՞ս ինչ այլ երջանկութիւն
 Երկրիս երեսին ունի գոյութիւն
 Նրա համար՝ ովոր բոլորն է թաղել,
 Ում հաւատացե՛լ է և ում սիրել:
 Բարձրը է սէրից այդ երջանկութիւն.
 Բայց ուզում է միայն արցունք և արիւն:
 Ներա մէջն է ի՛սկ ըսփոփանք մարդու,
 Երբ կը մեռնի միւս բախտաւորութիւն.
 Նըրա մէջ ոճրի հեշտասիրութիւն,
 Նըրա մէջ դժոխքն ու գրախտը հոգու:
 Նա մեզ մօտ է միշտ, անփոփոխ և նոյն,
 Կամ դպում է մեզ, կամ տանջում ահեղ,
 Ո՛չ, վրէժինդրութեան մի հաս ժամի տեղ
 Կ'երգուեմ, չեմ վերցնիլ տիեզերքն անհուն:

Լ է ե լ ա:

Գունատուե՞լես դու:


Ն ա ջ ի Ա բ ր է ք :

Լ ր ս ի ր : Ս ը ր ա ն ի ց

Ձ ա տ տ ա ր ի ա ո ա ջ ե Ղ ր ա յ ր ու ն է ի ,
 Եւ ն ա — կ ա ր ծ ե ս թ է ս ա Տ մ ա ն ա ծ բ ա ր ձ ր ի ց —
 Ը ն կ աւ գ ն ղ ա կ ի ց Փ ո ղ ա ղ ի շ խ ա ն ի :
 Ը ն կ աւ ն ա ա ն փ ա ո ք , բ ա յ ց ո չ կ ու լ ի մ Ե ջ ,
 Ա յ Լ ի բ ր Լ գ ա զ ա ն իւ ր ն ե ն ղ ո ս ո խ ի ն
 Չ ր ճ ա ն ա չ ե լ ո վ , բ ա յ ց ո ի ն ու վ ր ր է ժ
 ն ա ի ն ձ կ ր տ ա կ ե ց մ ե ո ն ե լ ու ժ ա մ ի ն .
 Եւ ա յ ն ը ս պ ա ն ո ղ վ ե ր ջ ը ձ ե ո ք ս ը ն կ աւ ,
 Եւ գ ա շ ղ յ ն ս ար գ է ն վ ե ր Լ բ ա ր ձ ր ա ց աւ :
 Բ ա յ ց մ տ ա ծ ե ց ի . « Ա յ օ է ք է ն ս ար գ ե ո ք ,
 Մ ա Տ ն ի ն չ է , մ ի թ է մ ի վ ա յ ր կ ե ա ն ը լ ո ղ
 Ե ր կ ա ր տ ա ր ու ա յ ց աւ , տ ա ն ջ ա ն ք գ ա ո ն ա գ ի ն
 Կ ր ջ ն ջ ի ի ն ձ ն ի ց , ո չ , ա մ ե ն Լ ի ն :
 ն ա ա շ խ ա ր Տ ի ս մ Ե ջ կ ր ս ե ր ի մ բ ա ն ,
 Կ ր գ ա ն ե մ ն ը ր ա ս ի ր ո յ ա ո ա ր կ ա ն
 Եւ ի մ կ ու ո չ հ ա ր ու ա ծ կ ր գ ր ր ի գ ե տ ի ն » :
 Ա ր գ է ն կ ա տ ա ր ու ե ց , ժ ա մ է վ ե ր ջ ա պ է ս ,
 Դ ե ո ե ր է կ հ ա ս աւ ք թ ժ ա մ ն ի ս կ ա պ է ս :
 Փ ա յ լ ու մ է , ն ա յ ի ր , շ ո ղ ն ար Լ մ տ ե ա ն ,
 Դ է Տ , լ ու ու մ ե մ ե ս ի մ ե ղ բ ո ր ը ս ձ ա յ ն :
 Ա ո ա ջ ի ն ա ն գ ա մ , ե ր ր ո ր ե ս ա յ ս օ ր

Տ ե ս ա յ ք թ ք ն ք ո յ շ պ ա տ կ ե ր ր գ ր աւ է չ՝
 Դ ա ո ը տ ր տ մ ու թ ե ա մ , խ ը ո ո վ ե ց ու ց ի չ
 Դ ր ժ ո խ ք ո վ հ ո գ ի ս վ ա ո ու ե ց աւ բ ո ղ ր .
 Բ ա յ ց ա յ ս ը զ գ ա ց մ ո ն ք թ ո աւ շ ու տ . . . վ ա յ լ ա Տ
 Պ ի տ ի կ ա տ ա ր ե մ ե ր ղ ու մ ը ս վ ս տ ա Տ :

Ի ն չ պ է ս ձ մ ր ա ն ձ ի ն ս ա ր ե ր ու մ՝ գ ու ն ա տ ,
 Լ է ի լ ա ն ա ո ա ջ ն ը ն կ աւ յ ու ս ա Տ ա տ
 Ծ ն կ ն ե ր ի վ ր ա յ ա ն ղ օ ր , թ ու Լ ա ց ա ձ .
 Ա ղ ա շ ա ն ք , ա ր ց ու ն ք հ ե ծ ծ ա ն ք դ ա ո ն ա մ ա ձ
 Թ ա փ ու ե ց ա ն ա ո ա ջ ն ա յ ն ա ն գ ու թ մ ա ր ղ ու :
 « Ս ո ս կ ա լ ի ե ս , ո՛հ , դ ու ա յ ղ հ ա յ ե ա ց ք ո վ ,
 Ո՛հ , մ ի ն ա յ ի ր ի ն ձ , ե ր ե ս ո ղ գ ա ր ձ ր ու :
 հ ո ս ու մ ե ն ի մ մ Ե ջ դ ա ո ն ա լ ի թ ո յ ն ո վ
 Ք ո խ օ ս ք ե ր ը . Օ՛ , Ա ս տ ու ա ձ , Ա ս տ ու ա ձ ի մ ,
 Մ ի թ է խ ա ղ ե ս դ ու խ ա ղ ու մ ի մ գ լ ի ն ի ն ,
 Պ ա տ ա ս խ ա ն ի ր ի ն ձ . բ ա ն չ ա ր ժ է՝ ար ղ ե ո ք
 Ք ո ա ո ա ջ ա ն մ ե ղ մ ա ր ղ ո ց ա ր տ ա ս ու ք ,
 Ո՛հ , խ ղ ճ ա՛ , ա ս ա՛ , ի ն չ պ է ս ե ն ար ղ ե ո ք
 Ք ո հ ա յ ր ե ն ա կ ա ն ա շ խ ա ր Տ ու մ լ ա լ ի ս .
 Մ ե ո ն ե լ ը դ ե ո վ ա ղ , ս ա ս տ ի կ վ ա ղ է ի ն ձ . . .
 Խ ը ն ա յ ի ր ի մ կ ե ա ն ք ն , ի մ մ ա տ ա ղ ու թ ի ն .
 Գ ի ս ց ե լ ե ս ար ղ ե ո ք , ի ն չ է ի ն ղ ու թ լ ի ն .
 Ծ ա ղ ի կ հ ա տ ա փ ու մ ե ղ ե լ ե ս ս ի ր ու ա ձ
 Դ ու է լ ի ն ձ . . . մ ա ն , ո՛հ ո չ , ա ն կ ա ս կ ա ձ » :



634-2009

Անողորք Հաջին ճակատով կնձռոտ
Օրհասի լուծեամբ կանգնել էր նրա մօտ:

«Քո աչքերի մեջ, ո՛վ դժնդակ մարդ,
Ո՛չ գուլթ, ո՛չ արցունք չեմ տեսնում ոչինչ,
Ա՛խ, Աստուած իմ, վա՛յ, ըսպասիր մի քիչ,
Գոնէ լոկ մի ժամ... գէթ մի ակնթարթ...»:

Սուրբ շողջողաց: Գնաց ու եկաւ,
Եւ մի վայրկենում գլուխը թռաւ...
Եւ արնաշաղախ, մեղսալից ձեռքով
Վեր առաւ խոկոյն վրայից գետնի.
Եւ ապա բերան սրածայր սըրի
Սրբեց իւր գոհի ծալծալ հիւսերով:
Յետոյ նա անշունչ գլուխը առաւ,
Փաթաթեց իւր թաւ ետինջու միջին,
Գուրս եկաւ տանից, թամբի մէջ թռաւ.
Յանկարծ պաշարուած նըրա հլու ձին
Երկնային ահով մի գերօրինակ՝
Խումբացընում, փրփրում է նրա տակ.
Բաշը ձիգ բռնած, փնչում, խրխնջում,
Կրծում է պողպատ դանդանաւանդներ,
Ոչ խօսք և ոչ սանձ՝ ոչինչ չէ լսում՝
Սլաքի նման թռչում է սարեր:

Վերջալոյս դեղնեց. ուշ է, ուշ է շատ,
Գիշերը խոնաւ շուտով կըհասնի,
Կովկասի գլխից ահուելի, հանդարտ
Սողում են ամպեր նման օձերի,
Անորոշ խաղեր են նրանք սարքում,
Անձուկ վըհերի բերանը մտնում,
Քսուելով փշեայ սուր մացառներին
Փայլուն մարգարիտ ցանում տերեւին:
Վազում է պղտոր, մոխրագոյն առուակ,
Փրփուր է խիում սէզների տակից,
Եւ փայլում այրի մշուշի միջից,
Ինչպէս մի մեռած գլխի երկու աչք:
Չուտ արա՛, փախիր, անցորդ միայնակ,
Գու վըրադ քաշիր ետինջիդ արձակ,
Զիուդ կաշուեկար սանձը ձիգ պահիր,
Կաշուեհիւս մտրակդ ապա՛ մի շարժիր:
Գեռ քո յետևից ոչոք չի ընկել՝
Ո՛չ վայրի գազան, ո՛չ լերան ոգին,
Բայց թէ կարենաս դու աղօթք անել՝
Արգելք չէր լինիլ հէնց այս րոպէին:

«Արշաւիր իմ ձի... վեհերոտ աչքով
Առաջդ պոպկէս փնջո՞ւ ես նայում,
Կամ քարէ՛ կոկած յորդառատ առուով,

Կամ օձ՝ պրսպրղուն թեփովն իւր փայլում...
 Քո բաշովը ես գաշտում ճակատի
 Սրբել եմ արիւնն իմ հղօր ձեռքի.
 Չարադէպ ժամին, խուլ անապատում
 Արդէն մի անգամ չես փրկել ինձ դու:
 Մենք հանգիստ կ'առնենք երկրում հայրենի,
 Քո երասանակն առաջուանից շատ
 Ես կըզարգարեմ արծաթով ուրսի,
 Եւ բաց կըթողնեմ դէպի կանաչ գաշտ...
 Վաղճուց է արդեօք, որ դու փոխուեցար,
 Ասա՛, ասա՛, ինձ, ընկեր թանկագին.
 Ինչո՞ւ այդպէս շուտ քափով ծածկուեցար,
 Ինչո՞ւ ես դժուար շնչում եմ տակին:
 Ամպից դուրս կ'ելնի լուսինը ահա՛,
 Կ'արծաթազօծէ ծառերի գագաթ,
 Եւ շուտով այն ձոր մեր առաջ կըգայ,
 Ուր խօլ խաւարում քընած է Ջեմատ:
 Հեռուից կըփայլեն՝ պրսպրղին տալով,
 Կըրակներ գիւղի խաշնարածների,
 Եւ կը նկատենք մենք, մօտենալով,
 Խուլ խրինջոցներ ձիւ ջոկերի...
 Ըուրջդ կըխմբուին ձիաներն ամեն,
 Բայց հերիք է մէկ տեղեց վեր թռչեմ,
 Նըրանք սարսափով յանկարծ կըփըռուան,

Եւ ողջը մէկ տեղ իսկոյն յետ կերթան.
 Գեռ հեռուից կըզգան, որ ճակատագրի
 Ծնունդներ ենք մենք խիստ և ահուելի...»

Հովիտները դեռ գիշերն է գրկած,
 Հանգիստ է Ջեմատ աուլը քնած.
 Չէ քընած միայն մի ծերուկ վշտոտ,
 Մենակ, իբր արձան գերեզմանական,
 Կստած է անշարժ գորշ քարի վըրան
 Փոշիներով լի ճաննապարհի մօտ:
 Աչքերը դէպի հեռաւոր ուղին
 Յառած են վշտով, թախիծով խորին:

«Ո՞վ է այս եկող, որ զգոյշ և լուռ
 Ցած է արշաւում սարից զառեվայր,
 Իսկ երկարաբաշ ընկերը տխուր
 Կախել է յոգնած գլուխը դէպ վար:
 Իւր ճանապարհի ետինջում փաթթած
 Կա մի բան ունի շատ ըզգոյշ բռնած:
 Եւ աչքի լուսի պէս է պահպանում:
 Եւ միտք է անում մաշուած ծերունին.
 «Ընծայ է, անշուշտ, այն մի թանկագին,
 Իմ կարօտալի աղջկանից սիրուն»:

Մօտ է ձիաւոր. սարի ներքեւում

Բանկարծ կանգնացրեց նա իւր յոգնած ձին.
 Յետոյ անհաստատ ձեռքով գողգողուն
 իսկոյն բաց արեց իւր սև եափնջին.
 Բաց արեց, և իւր ընծան արիւնոտ
 Կամաց գլորուեց վրան թարմ սէղի.
 Թշուառը տեսաւ— ո՛հ Աստուած գթոտ—
 Գլըլուեւը իրան անբախտ զաւակի:
 Եւ նա մի անմիտ յափշտակութեամբ
 Գլըլուեւը սեղմեց իւր շրթունքներին,
 Յայտնում էր, կարծես, այն անշունչ իրին
 Իւր վերջին տանջանք յուսահատութեամբ:
 Նա իւր ամբողջ կեանք մի հառաչքի մէջ,
 Լոկ մի համբոյրով զուրս թողեց, փչեց:
 Բաւ է, որ մարդիկ, վշտերն ահոեւի
 Խոցեցին նըրա սիրտը խղճաւի.
 Ինչպէս որ մի թել, փթած, հնացած,
 Մաս մաս եղաւ սա, կտրատուեց յանկարծ.
 Եւ նըրա անշարժ, խորին կնճիռներ
 Ծածկուեցան դժգոյն գոյնով մահաբեր:
 Հոգին այնպէս շուտ, արագ դուրս թռաւ,
 Որ այն մտածմունք, որով մինչև մահ
 Նա ապրեց, գէմքի գծերը նըրա
 Լիովին թողնել չկարողացաւ:

Հաջին պահելով մնայլ լուութիւն,
 Ծերի արարքից իսկի չարմացաւ,
 Մէկ սրին նայեց, մէկ էլ իւր ձիուն,
 Եւ արագ արագ լեռները փախաւ:

Անցաւ մի տարի: Մի նեղ խուլ կիրճում
 Փռչու մէջ երկու դիակ գարշահոտ
 Արջեւիս գտան մի քանի անցորդ,
 Յետոյ թաղեցին լերան գագաթում:
 Արիւնաշաղախ էին երկուսն էլ,
 Եւ ժանտ չարութիւն պարզ էր գծագրել
 Անէծք ու նզովք նըրանց ճակատին:
 Իրար պինդ գրկած՝ գետնի երեսին
 Վայր էին ընկել, կարկամ, քարի պէս,
 Դրսից բարեկամ՝ բայց չարագործ վէս:
 Գուցէ խօսք է լոկ ցընորքի ձևով,
 Բայց անցորդներին թուումէր այնպէս,
 Որ մերթ նըրանց դէմք փոխուումէր, կարծես,
 Որ միշտ ըսպառնում էին շրթունքով:
 Հագուստը նըրանց ձոխ էր բաւական,
 Փափախներ ծածկուած բաշլուղների մէջ,
 Մէկը նըրանցից էր Փուլադ իշխան.—
 Սակայն այն միւսին մարդ չը ճանաչեց:

1893 թիւ. Մայիս:




ԻՅՍ


ԱԳՆ

ԼԵՏ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	սխալ	ուղիղ
3	անվրէպ.	երբէք
17	ինգուլթին	ինգուլթին





« Ազգային գրադարան



NL0153079

